ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«17» մարտ 2020թ N 1027 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 0103023520 առ 13.03.2020թ. փորձագիտական եզրակացությունը,

Ընդհանուր բաժին
№ 2189
18 MAR 2020
Կից Նշում 09.50

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Ընդհանուր ընթացակարգով (նոր թողարկման ձև) գրանցել երաշխավորված թվով 1 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ձ. Դարբինյանին՝ նախարարի հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վ.Գաբրելյանին՝

1) Սույն հրամանը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

2) 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը Առողջապահության նախարարությանը:

3)Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Գրիգորյանին՝

1) 2 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի գրանցման հավաստագրերի ներկայացումը նախարարի հաստատմանը և տրամադրել Փորձագիտական կենտրոնին:

5. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղի վերաձևակերպված հավաստագրի տրամադրումը հայտատուին:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

17.03.2020

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հավելված
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2020թ. մարտի 17 - ի N 1027 – Ա հրամանի

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ (ՆՈՐ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՁԵ) ԳՐԱՆՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 162-Ն ԱՌ 28.02.2019 ՈՐՈՇՄԱՆ

| Հ/Հ | Առևտրային անվանում | Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | Դեղաձև | Դեղաչափ և թողարկման ձև (փաթեթավորում) | Արտադրող ֆիրման | Երկիր | Գրանցման հավաստագրի իրավատեր | Երկիր | Բացթողման կարգ | Եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Պլավիքս | կլոպիդոգրել (կլոպիդոգրելի հիդրոսուլֆատ) | դեղահատեր թաղանթապատ | 75մգ; (14/1x14/) բլիստերում, (28/1x28/) բլիստերում | Սանոֆի Ուինթրոպ Ինդաստրի, 1, ռուե դե լա Վիերգե, Ամբարես էթ Լագրավե, 33565 Կարբոն Բլանկ ցեդեքս | Ֆրանսիա | Սանոֆի Ֆարմա Բրիստոլ-Մայերս Սքվիբ ԷսէնՍի 174 Ավենյու դե Ֆրանս-Ֆ-75013 Փարիզ | Ֆրանսիա | Դ | 16916/2 13.03.2020 |